ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ
Փակ Բաժնետիրական Ընկերություն

ARDSHININVESTBANK

АРДШИНИНВЕСТБАНК
Закрытое Акционерное Общество

ARDSHININVESTBANK
Closed Joint-Stock Company

## «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28-Ը ԱՊՐԻԼԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 Լ

## «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ (ՎՆԱՍՆԵՐԻ) ԲԱՇԽՈՒՄՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքները «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը

ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունները, այդ թվում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2009 թվականի տարեկան հաշվեկշիռը 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, շահույթների և վնասների բաշխումը՝ համաձայն կից հավելվածների:

2. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2009 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարել:

3. Ստացված 1 331 051 264,90 (Մեկ միլիարդ երեք հարյուր երեսունմեկ միլիոն հիսունմեկ հազար երկու հարյուր վաթսունչորս դրամ ու իննսուն լումա) ՀՀ դրամ գումարի զուտ շահույթը (հարկերի վճարումից հետո մնացած), բաշխել հետևյալ կերպ՝

3.1. կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում սույն որոշման 3-րդ կետում նշված գումարի 5 տոկոսի՝ 66 552 563.10 (Վաթսունվեց միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր վաթսուներեք դրամ ու տաս լումա) ՀՀ դրամի չափով.

3.2. մնացած 1 264 498 701,80 (Մեկ միլիարդ երկու հարյուր վաթսունչորս միլիոն չորս հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր մեկ դրամ ու ութսուն լումա) ՀՀ դրամի չափով գումարը ուղղել «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010թ. ապրիլի 29-ից:

ՆԱԽԱԳԱՀ Կ. ՍԱՖԱՐՅԱՆ

Ստորագրվել է ժողովի նախագահի կողմից
2010թ. ապրիլի 29-ին, ք. Երևան